

ԳՈՅԱԿԱՆԻ ԵՎ ԲԱՅԻ
ԿԱՊԱԿՅԵԼԻՈՒԹՅԱՆ ԶԱՆԱԿԱԿԱՆ
ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՓՈՐՁ

Ռ. Մանուկյան

Այնուհետև՝ լայն առումով բնութագրելով արտահայտչամիջոցները՝ լեզվաբանը առանձնացնում է իբրև ոչ-պայմանական (անմիջական, անհրաժեշտ) և պայմանական գործոններ:

Լեզուն իր բազմադարյան հարստությամբ, լայնքի ու երկայնքի ծավալումներով միշտ էլ մնում է իր ներքին օրինաչափությունների չափանիշների սահմաններում, խոսքը, որ ծնվում ու ոգի է առնում նույն լեզվից:

Գ. Դեմիրճյանը «Քաջ Նազար» կատակերգության մեջ լեզվական տարբերակների համադրումը կատարել է ոչ թե համակցումով, այլ ձևաբովանդակային մերքին կապով, այսինքն մերսից, հերոսների դեպքերի ու դեմքերի հաջորդականությամբ, երգիծանքի գեղազիտական հատուկ չափանիշներով:

Մենեկապետը մարմնավորում է պալատական պաշտոնական արարողություններն ու ծեսերը՝ պալատին հատուկ դիմողական ոճեր և հմաքույր բառեր ու արտահայտություններ: Դրանք իրենց ընդհանուր կառույցներով մի տեսակ վեր են կանգնած սովորական խոսքի կառույցներից՝ ունենալով վերամբարձ ու փքրուտյոց ձևեր, ինչպես օրինակ՝ սովորական «քմեղ» բառի փոխարեն գործածում է «ընդունելով մահիժ»՝ «Անփույթ նմեցեց մինչև առափոտ», «Շուտով կարթնանա արքան», «Ահա իսկույն կճառագե արեգնափայլ» և այլն, և այլն:

Յուրաքանչյուր հերոս նաև անձ է, անհատականություն՝ ունենալով իր խոսքը, մտորումները, աշխարհընկալումը:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

20

A.R.A.R.@

նորություն չեն բերում:

Բայի կապակցական իմաստների իրացմամբ ամբողջանում է իրականության առարկաների, դրանց հատկանիշների և հարաբերությունների ընթացային ընկալումը՝ մտածողության ակտը, գոյականի կապակցական իմաստների իրացմամբ՝ առարկաների, դրանց հատկանիշների և հարաբերությունների վիճակային, առարկայացված ընկալումը՝ գիտակցության ակտը. առաջին դեպքում գործ ունենք նախադասության, երկրորդ դեպքում՝ բառակապակցության հետ: Նախադասությունը և բառակապակցությունը կազմավորվում են մեկը մյուսի հիմքի վրա՝ փոխհաջորդելով իրար և ստեղծելով հաղորդակցության գծային շարք (հմմտ.՝ Գ. Ջահուկյան, «Ժամանակակից լոկ իրար և ստեղծելով հաղորդակցության գծային շարք (հմմտ.՝ Գ. Ջահուկյան, «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» էջ 21 - 22): Դրանցից որևէ մեկի գործածությունը կախված է խոսքի հեղինակի նպատակադրումից (տեքստից) և նախասիրությունից, որոնցից առաջինը պայ- խոսքի հեղինակի նպատակադրումից (տեքստից) և նախասիրությունից, որոնցից առաջինը պայ- մանավորում է հաղորդման լեզվական, երկրորդը՝ ոճական կողմը: Այսպես՝ «Պարանը բարակ էր, կտրվեց, և հորթը փախավ» նախադասությունը կարող է գործածվել «Բարակ պարանը կտրվեց, և հորթը փախավ», «Բարակ պարանի կտրվելուց հետո հորթը փախավ» նախադասությունների և «Բարակ պարանի կտրվելուց հետո փախած հորթը» բառակապակցության ձևով: Դրանցից որևէ մեկի գործածությունը որոշվում է տեքստի բնույթով և հեղինակի նախասիրությամբ: Տարբերու- քյունը այդ ձևերի միջև կապակցելիության արտահայտությունն է՝ մի դեպքում՝ բայական, մյուս դեպքում՝ գոյականական:

Գոյականի կապակցական իմաստները դրսևորվում են ածականով, թվականով, դերբայով, կապային կառույցով և գոյականի ուղղական, սեռական, բացառական և գործիական հոլովներով դրված լրացումներով, որոնք իրացնում են շուրջ 50 լրացական իմաստներ: Սա նշանակում է, որ մեր լեզվում առարկան կարող է տարբերակվել 50 հատկանիշներով և այլ առարկաների հետ ունեցած հարաբերություններով: Իմաստային ծանրաբեռնվածության տեսակետից գոյականի լրացումները նույնարժեք չեն: Առանձնանում են սեռական հոլովով լրացումները, որոնք արտահայտում են շուրջ 30 կապակցական իմաստներ՝ պատկանելության, վերաբերության, ծագման, նյութի, որակի մասնական, տեղի և այլն, ուղղական հոլովով լրացումները, որոնցով դրսևորվում են ավելի քան ութ իմաստներ՝ մասնագիտության, տեղացիության, ազգային պատկանելության, կոչման և այլն: Գոյականի կապակցելիական իմաստային բնութագիրը կազմելիս հաշվի չենք առել մակբայով, գոյականի հայցական, տրական և ներգոյական հոլովներով լրացումները, որոնք դրվում են միայն բայանունների և ածականական ծագմամբ գոյականների վրա և փաստորեն բայի ու ածականի կապակցելիության դրսևորիչներն են:

21

ցումների զուգորդմամբ՝ 40 տիպով, չորս և ավելի լրացումների զուգորդմամբ՝ 10 տիպով: Ընդ որում՝ մեկ լրացումով կապակցության տիպերը նշում են լրացյալի իմաստային ծանրաբեռնվածության չափը, լրացումների զուգորդումների տիպերը ցույց են տալիս, թե լեզվում ինչքա՞ն և ինչպիսի՞ հնարավորություններ կան լրացյալի կապակցական իմաստների համատեղ արտահայտման համար: Տեսականորեն զուգորդումների տիպերի թիվը շատ ավելի մեծ է. մեր հաշվարկները հիմնված են կոնկրետ բնագրային նյութերից նպատակադիր քաղված գործում օրինակների վրա և արտացոլում են գոյականի կապակցելիական հնարավորությունների իրական դրսևորումները:

Գոյականի, և ընդհանրապես որևէ խոսքի մասի, կապակցելիական լիակադապար կառուցել անհնար է, քանի որ լեզվում կան օբյեկտիվ սահմանափակումներ: Նախ՝ լրացումների մեծ մասը բաշխվում է զուգորդումների տիպերի մեջ ըստ լրացյալ գոյականին հատուկ կապակցական իմաստների: Այսպես՝ ուղղական հոլովով լրացում ստանում են բացառապես անձնանիշ գոյականները, սեռական հոլովով լրացումները հատուկ են և՛ իրանիշ, և՛ անձնանիշ, և՛ վերացական գոյականներին, բացառական հոլովով լրացումները դրվում են հիմնականում իրանիշ գոյականների վրա, ածականը լրացնում է բոլոր գոյականներին և այլն: Ապա՝ սահմանափակումներ են ստեղծում նաև բազմանդամ կապակցությունների ընկալողական, հաղորդակցական և լեզվավորական հանգամանքները, այսինքն՝ լրացումներով ծանրաբեռնված գոյականական բառակապակցությունը դժվարացնում է նախադասության հստակ ընկալումը, լրացումների կուտակումը կարող է ստորադասական կապ ստեղծել հենց իրենց լրացումների միջև, հաղորդման ընթացքում սովորաբար կարիք չի զգացվում մեծ թվով լրացումներ գործածել, ոճական նկատառումներով առանձին կապակցական իմաստներ կարող են նկարագրաբար՝ նախադասությամբ, արտահայտվել և այլն:

Այս պատճառով էլ խոսքում իրապես գործածական են գոյականական այնպիսի բառակապակցությունները, որոնցում լծակից լրացումների թիվը մինչև չորսն է:

Մեկ լրացման և գոյականի կապակցությունը ամենից տարածված տիպն է:

Մի օր սա եկավ՝ թե չորան Չատին ոչխարը թաքում իր հանդն է արել (Հ. Թումանյան):

Երկու լրացումների զուգորդմամբ գոյականական բառակապակցություններից առավել հաճախակի են այնպիսիք, որոնցում լրացումներից մեկը սեռական հոլովով է դրված, և նրան լծակցում է ածականով, թվականով, դերբայով, կապային կառույցով կամ ուղղական հոլովով լրացումը: Տարածված գործածություն ունեն նաև թվականով և ածականով կամ դերբայով, երկու ածականով, երկու ուղղականով, երկու դերբայով, հատկապես սեռական հոլովով երկու լրացում ունեցող գոյականական բառակապակցությունները:

Ուզում էր իմանալ նժույգների այտօրվա տրամադրությունը (Դ. Դեմիրճյան): Տակից երևում էր սատիին կապույտ վերնաշապիկը (Նար - Դոս): Նա մի ճերմակ երես ունի, ոչ թե յոթ - ութ գունեղ աստաղ (Պ. Սևակ):

Միանում էր Ազատի երկրորդ վտակի հետ (Մուրացան):

Լծակից երեք լրացում ունեցող գոյականական բառակապակցությունները հատուկ են հայերենին և լայն կիրառություն ունեն: Այս լրացումների զուգորդման տիպերի մեջ ևս կան հաճախակի գործածություն ունեցողներ

Սահնակի երկու սպիտակ նժույգները գնում էին (Եր. Քոչար): Լուսամուտի երկու կոտրված ապակու տեղ կպցրած թղթերն ուռչում էին դեպի ներս (Նար - Դոս): Դա իմ ստազած առաջին շքեղ մկերն էր (Ա. Սահինյան): Հայաստանը գտնվում էր երկու հզոր գիշատիչ թշնամու միջև (Ստ, Չորյան):

Չորս լրացում գոյականը հազվադեպ է ստանում: Այս դեպքում կապակցության ընկալումը դժվարանում է: Լրացումներից մեկը սովորաբար դերանունով է դրսևորվում (դերանունը, ըստ էության, գոյականի կապակցական իմաստի արտահայտիչը չէ, այլ խոսքային - իրադրական հատկանշում է կատարում), կամ որոշ լրացումներ մույն խոսքի մասով են արտահայտվում:

Ինչ - որ ծիծաղելի ու սարսափազդու բան կար երկրի այս երկու ամենահզոր մարդկանց ցամաքում մեջ (Պ. Չեթունցյան): Նորահարսի ձյունի պես ճերմակ հարսանեկան ճոխ զգեստը, գոհարները ընդհանուր հիացմունք առաջացրին (Գ. Սևունց):

Հինգ և ավելի լրացումների զուգորդմամբ կառուցված գոյականական բառակապակցությունները բնորոշ չեն հայերենին և խիստ հազվադեպ են:

Բայի կապակցելիությունը ավելի բազմաբնույթ արտահայտություն ունի: Դա պայմանավորվում է բայի (նկատի ունենք նրա միայն եղանակային ձևերը) ընդհանուր իմաստով և հնարավորություններով. արտահայտելով ընթացային գործողություն՝ այն իր իմաստային ոլորտի մեջ ներառում է և՛ գործողության որակային հատկանիշները, և՛ գործողությանը ընթացակցող հանգամանքները, և՛ գործողության հետ առնչվող առարկաները, և՛ այդ առարկաների վիճակները: Իմաստային այս բազմազանությունը իրացվում է տարբեր խոսքի մասերով և նրանց թեքված ձևերով դրսևորվող ինը լրացումների միջոցով՝ գոյականի տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներ, մակբայ, կապային կառույց, դերբայ և ածական: Ըստ մեր հաշվարկների՝ այդ լրացումներով հայերենում գործնականորեն արտահայտվում են բայի կապակցական ավելի քան 140 խնդրային և պարագայական իմաստներ: Դրանց իրացման գործում ավելի բեռնունակ են հոլովական և հոլովակապային լրացումները. բացառական հոլովով լրացումներով արտահայտվում են 18 խնդրային և 6 պարագայական իմաստներ, տրական հոլովով՝ համապատասխանաբար՝ 17 և 9, կապային կառույցով՝ 14 և 10, հայցական հոլովով՝ 8 և 9, գործիական հոլովով՝ 9 և 15 և այլն:

Բայի կապակցելիության քանակական պատկերը, ըստ լրացումների առանձին և զուգորդաբար հանդես գալու, այսպիսին է՝ մեկ լրացումով՝ 9 տիպ, երկու լրացումների զուգորդմամբ՝ 50 տիպ, երեք լրացումների զուգորդմամբ՝ 15 տիպ, չորս և ավելի լրացումների զուգորդմամբ՝ 6 տիպ: Ինչպես գոյականի կապակցելիության դեպքում, այստեղ էլ լրացումների զուգորդումների տիպերի սահմանային թիվը զգալիորեն գերազանցում է գործում շուրջ 80 տիպերի թիվը:

Նկատելի է, որ իրականում սպառիչ գործածություն ունեն մեկ լրացումով տիպերը, զանգվածաբար տարածված են երկու և երեք լրացումների զուգորդումներով տիպերը, իսկ չորս և ավելի լրացումների ծանրաբեռնվածությամբ բայը քիչ է գործածվում, դրա համար էլ այդպիսի թվով տիպերի քանակը խիստ փոքր է և լեզվական քննության հարցում նորություն չի բերում:

Բայի կապակցելիության ուսումնասիրությունը բացահայտում է այլ իրողություններ ևս: Լրացումների զուգորդումների առանձին տիպեր չափազանց ակտիվ են, հաճախադեպ, դրանց լրացյալ բայերը արտահայտում են մի քանի կապակցական իմաստներ, այդ բայերի իմաստախմբերը բազմանդամ են, լրացում դարձող գոյականները իմաստային լայն ընդգրկում ունեն և այլն: Ըստ էության, դրանք են կրում հաղորդակցության հիմնական ծանրությունը:

Այսպիսի տիպերը դրսևորվում են երկու լրացումների զուգորդումներով: Հայցական և տրական հոլովներով լրացումներ ստանում են տարբեր իմաստախմբերի բայեր, որոնք ընդհանուր առմամբ արտահայտում են «տալու, հաղորդելու, վերածելու, ուղղելու, բաշխելու (Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, էջ 484)», նպատակային շարժման և այլ իմաստներ:

Վարդանը այս լուրը հաղորդեց նախարարներին (Դ. Դեմիրճյան): Ռոճիկ բաժանեցեր զինվորներին (Մ. Խանգաղյան): Նստեց աթոռակի վրա, արմունկները հենեց գրասեղանին, բռունցքները սեղմեց բունքերին (Ն. Չարյան): Շուշանիկը դուրս եկավ պատշգամբ մի փոքր օդ շնչելու (Ս. Շիրվանզադե)Պ:

Տրական և բացառական հոլովներով լրացումները իրացնում են բայի այնպիսի կապակցական իմաստներ, որոնք նշում են առարկայի տարածական և որակական տարբեր կարգի փոփոխություններ:

Գլուխը եկել էր նրան այցելության (Դ. Դեմիրճյան):

Մեզնից էսպես մի հարցում տուր հզոր մահին (Հ. Թումանյան):

Հայցական և բացառական հոլովներով լրացումներ են ստանում անջատման, ելման, շարժման և այլ իմաստախմբերի բայեր:

Դու պարտավոր ես զանազանել հայրենասերն արեղայից (Մուրացան): Արտասուքը մաքրում է մեր հոգին կեղտից (Ա. Շիրվանզադե): Երիտասարդին արտաքսեցին գլուխից (Ա. Սահինյան):

Ակտիվ են նաև հայցական հոլովով և կապային կառույցով, հայցական և գործիական հոլովներով, բացառական և գործիական հոլովներով և մի քանի այլ լրացական զույգերով արտահայտված տիպերը, որոնց թիվը հասնում է շուրջ 15 - ի:

Իմաստային բազմազանությամբ առանձնանում են երեք լծակից լրացումներ ունեցող բայական բառակապակցությունները: Սրանց մեջ էլ մեծ թիվ են կազմում հաճախադեպ տիպերը:

Ինձ հանեց կյանքի հատակից իմ ազգն իր ուսերին (Հ. Շիրազ): Թաշկինակով բշում էր ճանճե-
րը նրա երեսից (Գ. Սևունց): Իր հիմար վարմունքով ինձ էլ կվարկաբեկի Սառայի առջև (Նար-
Դոս):

Բայի կապակցելիության բնորոշ հատկանիշներից մեկն էլ այն է. որ լրացումը կարող է լինել
պարտադիր կամ կամքնոտի բնույթի: Կամքնոտի են այն լրացումները, որոնք հատուկ են բա-
խոսքի մասի մեջ մտնող բառերին՝ անկախ նրանց բառական կամ բառախմբային իմաստներից:

Ըստ էության, դրանք իրացնում են գործողության հատկանիշները և ընթացային հանգամանք-
ները արտահայտող իմաստները, որոնք են կատարման ձևը, ենթակայի կամ խնդրի վիճակը, կա-
տարման ժամանակը, չափը, հիմունքը և այլն, այսինքն՝ պարագայական իմաստները: Կամքն-
ոտի լրացումների ճնշող մեծամասնությունը նախադասության մեջ ներառվում է հաղորդակցա-
կան նպատակադրումներով, նրանց միայն փոքր մասն է լրացում դառնում բայի բառական իմաս-
տի պահանջով, ինչպես՝ տեղի լրացումը՝ շարժման իմաստի բայերի համար (ժամանել քաղաք,
այցելել թանգարան, հեռանալ գյուղից, անցնել փողոցով և այլն), նպատակի լրացումը՝ նպատա-
կային գործողության իմաստի բայերի համար (դիմել օգնության, մեկնել սովորելու և այլն), պատ-
ճառի լրացումը՝ հոգեվիճակի փոփոխությունն ճշող բայերի համար (կարմրել ամոթից, վախենալ
խավարից, այլալիվել վեճից և այլն) և այլն:

Պարտադիր են այն լրացումները, որոնք դրվում են բայի բառական իմաստի պահանջով, ինչ-
պես՝ զրկվել աշխատանքից, պատմել կարդացածը և այլն:

Բայի կապակցելիությունը բնութագրելիս սովորաբար հաշվի են առնում հատկապես պարտա-
դիր լրացումների հնարավոր գոգորդումները: Բայը գործնականում կարող է ստանալ չորս պար-
տադիր լրացում: Այդպիսի բայերն ունեն փոխարկման (փոխել, դարձնել, փոխարկել, քարգմանել
և այլն) և նպատակադիր շարժման (ուղարկել, տեղափոխել, տանել, բերել, փոխադրել, գլորել և
այլն) ընդհանուր իմաստներ: Գործում են հատկապես վերջին իմաստախմբին հատուկ լրացում-
ներով կապակցությունները:

Այժմանք հանկարծ մոտակա ժայռից անդունդը մի քար գլորեց որով

(Հ. Թումանյան): Սովորաբար հիվանդին բուժման համար գյուղից քաղաք էին բե-
րում

(Ա. Սահինյան): Նրա հովիվ հայրը սարից տոպրակով մածուն էր ուղարկելը
նրանց

(Հր. Մաթևոսյան):

Ավելի հնարավոր գործածություն ունեն այն կապակցությունները, որոնցում լծա-
կից լրացումներից մեկը կամ երկուսը կամքնոտի բնույթի են:

Այդ տարիներին բոքսայում տարիներով հերթագրվում էին աշխատանք ստանալով
համար (Ա. Սահինյան):

Մի անգամ Ալի Հաջագին մի այդպիսի բռնուցիկ տվեց իրեն կարդալու (Գ. Սևունց):
Բայը կարող է ստանալ նաև պարտադիր և կամքնոտի բնույթի հինգ լրացումներ:
Սա ըստ էության բայի կապակցելիության իրական դրսևորման սահմանային թիվն
է (վեց և ավելի լրացումներով բայական կապակցություններ գործածվում են խիստ
հազվադեպ):

Մյուս օրը Շողերը նրան իր հետ տարավ կոխոց խոտհունձի

(Հր. Մաթևոսյան): Հիմա ես էլ ուրիշների պես լույս աշխարհից հանգիստ սրտով
կարող եմ գնալ գերեզման (Գ. Սևունց): Իմ սերունդը ինձ հետ գիտի այսօր անգի-
հիսագունդը նրա բոլոր մանրություններով (Պ. Սևակ):

ԳՐԱԿԱՆ ԼԵԶԿԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՖՖՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ռ. Աետիսյան

Գրական լեզվի շրջանակներում հաղորդակցման գործընթացն իրականացվում է երկու եղանակով՝ ժո-
ղովրդական և գրական լեզվամտածողությամբ:

Մեր մշակույթի պատմության մեջ գրական լեզվամտածողության առաջին իրացնողը Բաֆֆին է, որն
իր ստեղծագործություններում (գեղարվեստական, հրապարակախոսական, գիտական) նախ՝ ավարտին
հասցրեց արևելահայ աշխարհաբարի նորմավորման ընթացքը, լեզվական այդ տարբերակին տալով
գրական որակներ, և ապա՝ առաջինն էր նաև, որ գրական լեզուն իրացրեց գրական լեզվամտածողու-
թյամբ, նպատակ ունենալով բացահայտել լեզվի գրական տարբերակի ներքին հաղորդակցման հնարա-
վորությունները:

Եթե նրա ժամանակակից շատ ու շատ ստեղծագործողներ ժողովրդայնության հասնելու համար օգտ-
վում էին ժողովրդական լեզվամտածողությունից՝ հաղորդակցման ոլորտ ներմուծելով ժողովրդական բառ
և բանը, աշխարհաճանաչողությունը, նրա ըմբռնումները, ապա Բաֆֆին առաջինն էր մեր իրականու-
թյան մեջ, որ իր ստեղծագործություններում մասնավորապես գեղագիտական խոսքում օգտվեց միայն
լեզվի գրական, նորմավորված տարբերակից՝ գրական լեզվամտածողությունն իր ստեղծագործություննե-
րում դարձնելով առաջնային պայման:

Ասվածի լավագույն ապացույցը Բաֆֆու «Մամվել» վեպն է, որտեղ գեղարվեստական խոսքի արտա-
հայտչականությունը դրսևորվել է բացառապես արևելահայերենի գրական տարբերակով և գրական լեզ-
վամտածողությամբ:

Այս ելակետից հողվածում բնության են ենթարկվում «Մամվել» վեպում գործածված գեղարվեստա-
կան խոսքի այնպիսի արտահայտչամիջոցներ, որոնք հիշյալ տեսանկյունից հաղորդակցման ոլորտում
որոշակի առանձնահատկություններ են դրսևորում:

Կրկնաստիճան պատկերավորություն: Բաֆֆու ստեղծագործություններում գեղարվեստական խոսքը
այլեւայլ որակների հետ աչքի է ընկնում մի յուրահատկությամբ ևս. այդ այն է, որ հեղինակը պատկերա-
վորման որևէ միջոց կերտելիս հաճախ նրա հիմքում գործածում է խոսքի պատկերավորման մեկ ուրիշ մի-
ջոց, և դրանով ստեղծվում է մի տեսակ կրկնաստիճան պատկերավորություն:

Այսպես՝ «Յուր պղնձյա ամրակուտ գրահավորության մեջ, յուր գեղքերի շողշողուն փայլով, հրդեհնե-
րի վառ ճառագայթների առջև փայլում էր նա յուր անվան համեմատ, որպես մի արեգակ յուսապայծառ
որ աչք էր շլացնում» (266): Հեղինակն այստեղ ստեղծել է մի գեղեցիկ համեմատություն. գրահավորված
Մերուժանի արտաքին փայլը համեմատելով արեգակի հետ՝ աշխատելով ասելիքն ավելի ընդգծված ներ-
կայացնել և առավել չափով գրավել ընթերցողի ուշադրությունը: Մյուս կողմից՝ այդ համեմատությունը
ձևավորվել է՝ իր հիմքում ունենալով չափազանցություն:

Նմանատիպ յուրահատկություններ ունեն նաև հետևյալ օրինակները. «Նա կայծակի նման անցնում
էր մեկ փողոցից դեպի մյուսը, երբ նկատում էր, որ պարսիկները այն կողմում թուլանում են» (268), «Նա
էր մեկ փողոցից դեպի մյուսը, երբ նկատում էր, որ պարսիկները այն կողմում թուլանում են» (304), «Հավա-
գալիս էր, որպես մի մորկածուկ հեղեղ, ամեն ինչ ողողելու, ամեն ինչ ոչնչացնելու համար» (423), «Հավա-
գալիս էր, որպես մի մորկածուկ հեղեղ, ամեն ինչ ողողելու, ամեն ինչ ոչնչացնելու համար» (423), «Նա յուր արկանով այնպես կաշկանդեց ուժեղ անասունին, որպես ճանճը կաշկանդվում էր սար-
դոստայնի մեջ» (451) (նվազաբանություն), «Նա ձեռքը տարավ դեպի նետը, որ տակավին մնացել էր ցց-
ված ագորի մեջ, բարկությամբ դուրս քաշեց: Արյունը սկսեց վտակի նման հոսիլ» (464) և այլն:

Ընդհանրապես գեղարվեստական այս կամ այն արտահայտչամիջոցի կազմում մեկ այլ արտահայտ-
չամիջոց գործածելը Բաֆֆու գեղարվեստական խոսքի յուրահատկություններից կարելի է համարել: Այս-
պես՝

ա) Համեմատությունների հենքի վրա ձևավորված փոխաբերություններ՝ «Իսկ ես հագիվ կարողացա
հասցնել ինձ իմ տիրոջ մոտ, որպես կենդանի նամակ» (18), «Հունաց կայսրը մեկ կողմից, պարսիկ ար-
քան մյուս կողմից, երկու ազգաի վիշապների նման, բերանները քաջ արած, մաքառում էին միմյանց հետ,
թե որը շուտ կկլանե անտեր մնացած երկիրը...» (22), «Ի սեր աստծո, առանց այդ ավերորդությունների,
պատմիր, ինչ որ ասելու ունես, դու կարող ես վստահել, որ ես կնոջ նման արտասուք չեմ քափի» (42),
«Վերջին խոսքը այնպիսի մարդու ձայնով արտասանեց փոքրիկ երիտասարդը, որ նետի նման զգվեցավ
մեծափառ պարթևի սրտում» (67), «Հայաստանը, մի կոշտ ոսկորի նման, մնացել էր նրա կոկորդում» (72),